

# Տանյա ԹԱՆԴԻԵՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՎ

(Սկիզբը թիվ 1-ում)

## 3. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԻՆՉՊԵՍ ՈՐ Է

1993-ի ապրիլի 18-ին դարձյալ «քռնեցի» Արցախի ճանապարհը: Համառ ճարտերից հետո մեր գինվօրներն արդեն ազատազրել էին Քարվաճառը, և մենք, այս անգամ որպես Շուշանիկի «բիկնապահներ» լրագրող Գրետ Վարդանյանն ու ես, մեկնում էինք «քեժ կետ»՝ ռեպորտաժների շարք պատրաստելու:

Հենց նոր ավարտված ճակատամարտի հետքերը սարսափելի էին, բարձ, սահմոկեցոցից: Հնարավոր չեր հանգիստ կերպով նայել ծխացող ավերակներին, որոնք հեռավոր պատկերացում անզամ չեն տալիս երեմնի մարդաշատ շրջանի մասին: Ու՞ր են իիմա այս փլատակների տերերը, ինչո՞ւ ժամանակին ծառս չեղան իրենց վայրենի բնազդներն արքացնող զազանակերպելի դեմ, ինչո՞ւ բույլ տվեցին հազիվիազ մարդեղենացած իրենց գոյուրյունը նորից բաղել հազարտոննանց ժանրուրյան տակ, որպեսզի էլ երբեք շրնջուղավորվի: Բայց կարո՞ղ է, արդյոր, ժողովորդ կոչվող զանգվածը շգնալ իր ստոր կրքերը դրոշ դարձրած իշխանավորների ետևից, կարո՞ղ է հակադրվել նրան, ընրոստանալ նրա դեմ: Հազիվ թե: Շնայած բոլոր պատերազմներում առաջին զոհը, առաջին տանով տվողը, առաջին կորցնողը հենց ինքն է լինում, որովհետև ապարանքները միշտ է հաստարեստ պատերով ու ամուր շարվածքով են, և մինչև նրանց հասնելը ժողովորդի դիակների լեռն է բարձրաւնամ, ու նրա արյունն է գետ կապած հոսում:

Ես խղճահարված նայում էի շուրջս ու մտածում ոչ թե ներկա զրիված: հեռազանքների, այլ շատ ու շատ հեռավոր ժամանակների իմ արյունակիցների մասին, ովքեր ծաղկեցրել էին այս երկիրը և նահացու կրկում միայն զիջել ասպատակողներին: Ոչ, ես այս վերջիններին չեի խղճում, պատմուրյունը, ի մերջո, իր արդար դատն էր արել, այլ նրանց ովքեր տերերն են եղել այս երկիրի, բայց վաղուց հոդ ու մոխիր են դարձել իրենց սրտում, զուցե, տանելով մի օր վերջապես ազատազրվելու, նարրվելու բաղձանքը: Եվ ահա կատարվել էր կատարվելիքը, ու մենք դրա վկան ենք: Բայց հաստատելու համար դեռ որքան ճանապարհ պետք է անցնել օրե՞ր, տարինե՞ր, դա՞ր, դարե՞ր, և ավարտվե՞ց, արդյոր, մղծավանջը, թե՝ աշխարհի հզորների կամքով դեռ արյուն է հեղվելու, և շարունակելու են որոտալ հրանորները:

## Ակուա Սերոբյանի գրառում- հիշողություններից

«Բոլոր պարագաներում ահավոր բան է պատերազմը:  
Որքան լավ տղաներ և աղջիկներ կորցրինք...  
Սարսափելի շատ բաներ եմ տեսել, ծանր օրեր եմ  
ապրել: Դիշում եմ ինչպես ոտքով, ծյան միջով մի քանի  
կիլոմետր ճանապարհ կտրեցի ականապատված  
տեղանքով վիրավորներ փրկելու համար»:

Երբ ավտոբուսը կրկին Ստեփանակերտի ճանապարհ դուրս եկավ, մուքը լիրա էր հասել: Պատերազմն արդեն «ետևում» էր, և մենք լուսարձակները միացրած հանգիստ կտրում էինք ասֆալտի ժապավենը: Կարճ է, եիրավի, մարդկային հիշողուրյունը և լսվ է, որ այդպես է, թե չէ անվերջ երկուուից մեկ էլ տեսնում ես սկսում ես քարանձավային կենդանու նմանվել: Եվ կծկվել: Շիարգել ինքը թեզ: Ավադ, այդ էլ ենք զգացել... Այսօրքա հպարտուրյունը, երճանքը, հաղթանակի ուրախուրյունը, որքան էլ ոգենամ, չեն կարող նմանեցնել իմ այն նախորդ դարարապյան այցին, թեև հենց նա է նախապատրաստել այսօրը, որովհետև երե մի անգամ զնում ես ճակատագրին ընդառաջ, էլի ու էլի ես զնարու, իսկ երե նստում մնում ես մի տեղում, անելույ բան է, թե երբեկց կցանկանա շարմիկ-անհանգստանալ: Կրկին աշխիս առաջ է զայիս 88-ը, Ստեփանակերտը ապրիլի 24-ի գույներով, սպասումներով, ցավ ու կույժում ու հիշում եմ աներեր հաստատակամուրյամբ:

Հյուրանոցում շատ ցուրտ էր, թեև աւքիլին արդեն վերջանալու վրա է, Վայիկը հավատարմորեն իր քամին առյալը զիջում էր ինձ, իր սենյակի պատուաները պիտի փակում ու քննում «մերկ» մահճակային, իսկ ես ամրուց զիշեր իմ համարում նայած զրում էի:



ու զրում: Առավոտյան զայիս էր համարի հերթապահումին, նայում մոխրագույն դարձած դեմքիս ու կշտամբում. «Եղ իինչ զա է կիրում եղքան, կյործ արեք, կյործ, կիրելով որ լիներ, Նարարադը իրմի վաղուց մերն էր ըլալի»: Ես ծաղրում էի նրան իր կեսպրական-կեսդարապայան բառապաշարի համար ու մի քամակ թեյ խնդրում ցավող կոկորդս տարացնելու համար; - Ճարար չկա, - ասում էր նա: - Առանց շարարի, - ասում էի, - զուր էլ հո կա».

- Շուրնը հյուղու ա, տրութերը մարրվալ չըն: - Քանի, նոր թեր: - Որ մի-մին կարագով հաց էլ լինի, կօզի՞ս: - Կարագով հացը պահի ուս սալդարներին կաշառելու համար, որ ծեր վրա չկրակեն: - Ի, իոյն իրանց վրա, լոխ Ալիկի լամուկներն ըն, ես ընդոնց պեան տվողը չըմ:

Ուստի «սալդարները» (պարեկները) մեզ հետամտում էին անշշուկ ստվերի նման: Նրանք զիտեին արդեն ով ենք, ինչու ենք այդտեղ, ում հետ ենք հանդիպում, ուր ենք զնում: Երբ ուշ զիշերով մերենայից հոգնատանց իշնում էինք կենտկոմի շենքի առաջ ու ուրով բայլում մինչև հյուրանոց, նրանց հրամանատարը մոտենում, զգուշացնում էր. «Պօբիստրէ, քեյտա, ըլուակոմ պօզիո, ուլչայ...»: Կամ դրա նման մի բան: Ու միշտ վախեցած: Միշտ չորս կողմը նայելով: Ումի՞ց էր վախենում հզոր քանակի կապիտանը, ումի՞ց էր զգուշանում... Այն ժամանակ կար ընդամենք դրսնիւակ, հայերիս համար՝ հայարափ Շուշին, կար «հզոր» Աղբեջանը, որի թիկունքում կանգնած էր նույնքան հզոր ուսական քանակը: Իր անպատմելիուրյամբ արբած, յորանասուն տարիների՝ «Եղբայրուրյունը», «հավասարուրյունը», «միասնուրյունը» ակնրաբրորեն մոռացած, ամրարտավաճ քանակը, որ տանկերի - բրրուների տակ հայկական քնակավայրերը ավերելով պիտի զար ու զար մեզ վրա, մինչև որ սկսվեր մեծ ԱՐՑԱԽԱԿԱՆԸ:

## Ակուա Սերոբյանի գրառում- հիշողություններից

1992 թվականի ապրիլն էր: Դոգնած ու գլխիկոր, նահանջում էին հայկական զոկատները: Դետևում էին մնացել թուրքերի կրակի մատնած 52 հայաբնակ գյուղերը: Այրվող շեների պես ծխում էին նաև հայ ազատամարտիկների սրտերը: Ամաչում էին մեկմեկու երեսի նայել, չհասցրին հողին հանձնել մարտական ընկերների մարմինները: Պահն էր օրիասական...